

- 23 Զայնս որք անհոգ գըտան կարի  
Օգնել ինքեան յայնմ աքսորի,  
Ոչ մեղագրեալ զերթ անմարդի  
Օրհնէր բանիւ ողջունալի:
- 24 Իսկ զառնողաց ինքեան բարի  
Քանձու, ջանիւ եւ սիրով լի  
Շնորհընկալ եղեալ նա տի  
Հայցէր նոցա վարձ վըճարի:
- 25 Ահա զՍարգիս որ մատնեալն էր,  
Եւ կապանօք յաքսորս շըջէր,  
Տէր է՝ Արարիչ իւր մարդասէր  
Խօրատեալ փրկէր զի սիրեալն էր:
- 26 Ուստի նախանձն ըզնա վանէր,  
Եւ մահառիթ բանտի մատնէր,  
Անդ վերըստին դարձուցանէր,  
Խընամն երկնից զի անպարտն էր:
- 27 Զայն՝ զոր եղբայրն հրզօր է՝ անսէր  
Գաւով, ոսկւով վըտարանդէր,  
Սէրն օտարաց օգնեալ զերծէր  
Ջանիւ գործով՝ զի զըրկեալն էր:
- 28 Որ միանգամ զայն զըրպարտէր.  
Եւ զայլս կեղծեալ բանիւ խաբէր,  
Թէ նա հերձուած է՝ աղմըկիչ էր,  
Արդ ամաչէր զի այնպէս չէր:
- 29 Եւ որ միջնորդ մատնութեանն էր,  
Զըղջմամբ սրբտին բարեխօսէր,  
Առ փոխարքայն՝ զոր եւ հայցէր  
Զերծել ըզնա՝ զի սաղրեալն էր: